
ՎԱՐԴԱՆԱՆՔ
Ա Բ Գ Դ
Ե Զ Է Ը
Թ Ժ Ի Լ
Խ Ծ Կ Հ
Ձ Ղ Ճ Մ
Յ Ն Շ Ո
Չ Պ Ջ Ռ
Ս Վ Տ Ր
Ց Ու ՓՔ
Եվ Օ Ֆ

<<ՎԱՐԴԱՆԱՆՔ>> ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Հաղորդակցումը և դրա կարևորությունը նախադպրոցական տարիքում

Կատարող՝ Նարինե Սարգսյան
Ղեկավար՝ Կիմա Գևորգյան

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....

ԳԼՈՒԽ 1. ԳԱՂԱՓԱՐ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Հաղորդակցման ունակություն.....
2. Հաղորդակցման դասակարգումը.....
3. Հաղորդակցման տեսակները.....

ԳԼՈՒԽ 2. ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

2.1. Հաղորդակցման դերը անձի անհատականության ձևավորման գործում.....

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինչու եմ ես իմ խոսքը սկսում այսպես. Կա մի հին ասույթ, որտեղ ասվում է.<<եթե տեղեկացված ես, ուրեմն պաշտպանված ես>>: Ինչո՞ւ Նոյին հաջողվեց փրկվել, որովհետև Աստված նրան տեղեկացրել էր սպասվող ջրհեղեղի մասին: Եվ հենց այս նկարն է Արտակարգ Իրավիճակների Նախարարությունը ընտրել որպես խորհրդանիշ: Այսպիսով՝ մենք չենք կարող չգերագնահատել տեղեկացվածության դերը, և տեղեկացվածությունը պետք է սկսել երեխայի ծնված օրվանից, քանի որ տեղեկացվածությունը փրկում է մարդկությանը կործանումից: Եվ մեր՝ մանկավարժներիս դերը նրանում է, որ տեղեկացվածությունը և նրա փոխանցումը զարգացնենք և դարձնենք մշակույթ:

Հաղորդակցման առանձնահատկությունները և նշանակությունը նախադպրոցական տարիքում

1. Ինչ է հաղորդակցումը

<<Հաղորդակցությունը մեխանիզն է, որի միջոցով ապահովվում է մարդկային հարաբերությունների էությունն ու զարգացումը>> Քուլի

Հաղորդունակությունը անձի այն հատկությունն է, որով նա բնականոն փոխհարաբերություններ է հաստատում այլ անձանց հետ և կարողանում է ապահովել պատշաճ հետադարձ կապ :

Մարդն ապրում է ինֆորմացիոն դարաշրջանում՝ հաղորդակցության տարածման մեջ: Առաջացել է <<տեղեկացված մարդ>> տերմինը. Նրա համար հմտություն է ստանալ, մշակել և փոխանցել տեղեկատվությունը:

Ըստ Ն. Լումանի հաղորդակցությունը տեղի է ունենում 3 տարբեր ընտրությունների սինթեզից, մասնավորապես՝ տեղեկատվության ընտրություն, տեղեկատվության հաղորդակցության ընտրություն և հասկացվածություն կամ չհասկացվածություն հաղորդակցությանը և նրա տեղեկատվությանը: Այս 3 բաղադրիչերից որևէ մեկը չի կարող առանձին գոյություն ունենալ: Միայն միասին են նրանք իրականացնում հաղորդակցությունը:

Շատ կարևոր է, թե որտեղից է վերցվում տեղեկատվությունը և ինչպես է փոխանցվում: Դա հաղորդակցման կարևոր կողմերից է:

<<Կարելի է խոսել ամեն ինչի մասին, բայց ոչ ամեն կերպ>>: Հասկացված լինելու համար շատ կարևոր է տեղեկատվության փոխանցման հմտությունը, այսինքնք հաղորդակցվելու ունակությունը: Օրինակ՝ եթե երեխային մատնացույց անելով խոսենք հիգիենայից, դա ճիշտ չի ընկալվի, իսկ եթե այդ հարցին մոտենանք, ասենք, հիգիենայի կարևորության մասին խոսելով, կլինի ավելի նպատակային:

1. Հաղորդակցման ունակություն

Ըստ Պրագմատիկ Ռոկֆելերի << մարդկանց հետ հաղորդակցման ունակությունը նույնպիսի ապրանք է, ինչպիսին շաքարն է և սուրճը: Ես պատրաստ եմ այս ունակության համար վճարել ավելի քան այս աշխարհի որևէ այլ ապրանքի համաև>>: Կարողանալ հաղորդակցվել նշանակում է՝ կարողանալ ճանաչել մարդկանց, գնահատել նրանց գործնական հնարավորությունները և դրա հիման վրա փոխհարաբերություններ կառուցել:



1.2.Հաղորդակցման դասակարգում

Որպես հաղորդակցման սուբյեկտ հանդես են գալիս ինչպես անհատներ, այնպես էլ՝ խմբեր: Ըստ սուբյեկտների ընդգրկման ծավալի՝ հաղորդակցումը դասակարգվում է՝

1. Միջանձնային՝ 2 անձանց միջև դեմ առ դեմ իրականացվող հաղորդակցում,
2. Խմբային՝ 3 անձից մինչև 2030 անձանց միջև հաղորդակցություն,
3. Զանգվածային. այս դեպքում ընդգրկվում են միմյանցից մեծ խմբեր:

1.3. Հաղորդակցման տեսակները

Հաղորդակցման տեսակներից է խոսքային հաղորդակցումը, որի հիմնական միջոցներն են բանավոր և գրավոր խոսքը և հաղորդակցումը ժեստերի միջոցով: Կինեսիկա - Հունարեն՝ շարժում: Դրանք այլ մարդու տեսողությամբ ընկալվող շարժումներ են, որոնք հաղորդակցության մեջ կատարում են արտահայտչական գործառույթ: Կինեսիկային են պատկանում արտահայտիչ շարժումները, որոնք դրսևորվում են դիրքերում, ժեստերում, դիմախաղում /միմիկա/, քայլվածքում, հայացքում: Մարդիկ ցանկացած պահի խոսում են ոչ միայն լեզվով, այլև ժեստերի լեզվով: Ժեստերը ձեռքի, գլխի, մարմնի շարժումներ են (ֆրանսերեն՝ժեստ-գործողություն): Որքան էլ տարբերվեն կուլտուրաները, ամենուր հուզվածության աճի հետ աճում է նաև ժեստիկուլյացիայի ինտենսիվությունը: Ժեստերի մի մասի կոնկրետ իմաստը տարբեր կուլտուրաներում տարբեր է: Սակայն բոլոր կուլտուրաներում կան ժեստեր, որոնց նշանակությունը նույնն է:

<<Հաղորդակցումը մարդկային գանձերից ամենաշքեղ գանձն է>>՝ նկատել է Անտուան էքզյուպերին: Այն ընդգրկում է հասարակական կյանքի բոլոր ոլորտները: Այն մարդկային հազարակության գոյության անհրաժեշտ պայմանն է, սերունդների կապի և հաղորդակցության միջոցը, անձի ձևավորման կարևորագույն գործոններից մեկը: Ինչպես ասել է նշանավոր հոգեբան Ռուբինշտեյնը. <<Հաղորդակցումը վերաբերմունք է աշխարհի, ուրիշ մարդկանց և ինքն իր նկատմամբ>>: Հաղորդակցումը որոշում է անձի վարքագիծը, ձևավորում է նրա գիտակցությունն ու ինքնագիտակցությունը, խթանում է անձի զարգացումը, կազմակերպում է մարդկակց համատեղ գործունեությունը: Կենդանի, անմիջական հաղորդակցման միջոցով իրագործվում է սոցիալական, բարոյական, գեղագիտական արժեքների փոխանցումը:

Հոգեբանության մեջ հաղորդակցումը մի օբյեկտից մյուսին տեղեկատվություն փոխանցելու գործընթաց է:

2.1. Հաղորդակցման դերը անձի անհատականության ձևավորման գործում

Հաղորդակցման դերը շատ կարևոր է անձի անհատականության ձևավորման գործում նրա ծննդյան օրվանից սկսած:Հոգեբաններն ասում են, որ եթե երեխան մեծանում է դրական միջավայրում , նրան դաստիարակել պետք չէ: Իսկ դրական միջավայրն ապահովվում է

ճիշտ հաղորդակցմամբ: Օրինակ, եթե երեխայի հետ խոսենք բղավելով և պահանջենք, որ նա հանգիստ խոսի, նա այդ բանը չի անի: Իսկ եթե հանգիստ, համբերատար հաղորդակցվենք, նա նույնպես այդպես կվարվի:

2.2. Հաղորդակցման առանձնահատկությունները և և կարևորությունը նախադպրոցական տարիքում:

Հաղորդակցման առաջին փորձը երեխան ստանում է ընտանիքում. Սովորում է դիմել խնդրանքով, հայտնում է անհանգստությունները: Հետո երեխայի հաղորդակցման գոտին ընդլայնվում է և առաջանում է նոր հարաբերություններ կառուցելու անհրաժեշտություն: Երեխայի մոտ հաղորդակցման մի նոր փուլ է սկսվում, երբ նա սկսում է խոսել: Նախադպրոցական տարիքում երեխայի մոտ զարգանում է բանավոր խոսքը, որը նրան նախապատրաստում է գրավոր խոսքին: Այդ տարիքում երեխայի մոտ զարգանում է նաև ժեստային հաղորդակցումը:

Հաղորդակցման ունակության ամրապնդման գործում մեծ դեր ունեն խաղերը, որի ժամանակ երեխաները ցանկանում են հաղորդակցվել:

Հաղորդակցման առավել արդյունավետ ձևը երկխոսությունն է, որի ձևավորման համար նախապայման է հանդիսանում երեխայի և դաստիարակի շփումը: Սակայն երեխան, շփվելով դաստիարակի հետ, մյուս կողմից էլ շփվում է այլ երեխայի, մեծահասակի հետ, որը նույնպես ազդեցություն է թողնում անհատի ձևավորման վրա: Այստեղ ես ձեզ կներկայացնեմ մի եռանկյուն, որի մի անկյունում դաստիարակն է, մյուս անկյունում երեխան է, իսկ մյուս անկյունում կանգնած են՝ այլ երեխա, երաժշտության դաստիարակ, այլ մանկավարժական աշխատողներ, ծնող, հարազատներ և այլ անձինք:



Ավագ նախադպրոցական տարիքում երեխան հասարակության հետ հաղորդակից լինելու համար պետք է ունենա կապակցված խոսք,բառապաշար, հնչունային կուլտուրա, երկխոսության մեջ մտնելու, մենախոսելու կարողություն: Սեփական անձի գիտակցումը և անձի դրական ընկալումը ձևավորվում է ուրիշների հետ շփման դրական փորձառության արդյունքում: Երեխայի հոգեկան բոլոր գործընթացները ձևավորվում են խոսքի միջոցով: Խոսքն էլ իր հերթին բարդ հոգեկան գործընթաց է, որի զարգացումը կախված է մի շարք պայմաններից: Երեխայի խոսքի զարգացման հարցում կարևոր է շրջապատի, միջավայրի ներգործությունը: Երեխան սովորում է խոսել, ընդօրինակել մեծահասակներին, որոնք պետք է նպաստեն երեխայի ճիշտ, հստակ խոսքի ձևավորմանը: Երեխան վաղ տարիքից լսելով գրագետ խոսք՝ արդյունքում ձևավորում է իր սեփական խոսքը:

Այստեղ շատ պարզ երևում է, թե որքան մեծ է դաստիարակի դերը, նրա ճիշտ հաղորդակցումը երեխայի հետ:

Սեփական անձի գիտակցումը և սեփական անձի դրական ընկալումը ձևավորվում է ուրիշների հետ շփումի դրական փորձառության արդյունքում:

1. Երեխա-ծնող հաղորդակցում

Երեխան իր հաղորդակցման առաջին փորձը ստանում է ընտանիքում: Այստեղ շատ մեծ է ծնողի դերը: Առաջին հերթին նա պետք է երեխային ընդունի այնպիսին, ինչպիսին նա կա: Երեխայի կայուն ինքնագնահատականը նպաստում է հաղորդակցման հնարքների ստեղծմանջ, որը հետագայում կօգնի նրա հարմարողականությանը հասարակության մեջ:

2. Երեխա-դաստիարակ

Շատ կարևոր է դաստիարակի դերը երեխայի համար նոր միջավայրում հաղորդունակության ձևավորման գործում: Դաստիարակը պետք է երեխայի հետ հաղորդակցվի այնպես, որ երեխան վստահի նրան և փոխանցի իր ստացած տեղեկատվությունը:

Երեխայի հոգեկան բոլոր գործընթացները (հիշողություն, ուշադրություն, մտածողությունը) ձևավորվում են խոսքի միջոցով: Խոսքը հոգեկան բարդ գործընթաց է, որի զարգացումը կախված է մի շարք պայմաններից:

Երեխայի խոսքին զարգացման հարցում կարևոր է շրջապատի, միջավայրի ներգործությունը: Երեխան սովորում է խոսել՝ ընդօրինակել մեծահասակներին, որոնք պետք է նպաստեն երեխայի ճիշտ, հստակ խոսքի ձևավորմանը: Երեխան վաղ տարիքից լսելով մաքուր, գեղեցիկ, ճիշտ խոսք՝ արդյունքում ձեւավորում է սեփական ճիշտ խոսքը:

Հոգեբան-մանկավարժներն առանձնացնում են երեխայի խոսքի զարգացման հետեւյալ փուլերը՝

1. նախապատրաստական շրջան,
2. խոսքի ստեղծման փուլ,

3. խոսքային հաղորդակցման զարգացման շրջան:

Հասակակիցների հետ հաղորդակցման փորձը ձեռք է բերվում աստիճանաբար, անուղղակիորեն կախված է երեխայի անհատական հոգեբանական առանձնահատկություններից, որոնք օգնում կամ խոչընդոտում են հասակակիցների միջավայրում նրա սոցիալականացման գործընթացը: Յուրաքանչյուր երեխա անցնում է սոցիալականացման իր անհատական ուղին՝ լի դժվարություններով եւ փորձություններով, որոնց հաղթահարման գործում չափազանց մեծ է մանկավարժական աջակցության դերը: Սոցիալական զարգացման ընթացքում մանկավարժական ուղղորդման կարիք ունեն բոլոր նախադպրոցականները: Այսպես, օրինակ, ակտիվ նախաձեռնող նախադպրոցականն անընդհատ փորձում է ցուցադրել սեփական ձեռքբերումներն ու առավելությունները՝ հաճախ հաշվի չառնելով խառնվածքով ավելի հանգիստ երեխաների հետ: Կան երեխաներ, որոնք նախաձեռնող չեն, հակված են կատարողական վարքագծի դրսեւորման: Նախադպրոցականներից շատերը կազմակերպված չեն կամ անկառավարելի են:
Բոլոր նշված եւ այլ դեպքերում պահանջվում է մանկավարժի հետամուտ անհատական աշխատանք:
Տարիներ առաջ Սարգիսը մայրիկի ձեռքը բռնած եկավ մանկապարտեզ: Նա չէր լացում, թաքնվում էր մայրիկի ետևում և միաձայն նվնվում: Երեխան ուներ հաղորդակցման խնդիր: Այդպես նվնվալով էլ մնում էր մի որոշ ժամանակ: 10 օր անց մայրիկը խնդրեց, որ քնի: Երբ ասացի, որ դեռ շուտ է, մայրիկին այդքան էլ դուր չեկավ: <<Ախր այդպես էլ կսովորի չքնելուն>>, ասաց մայրիկը: Ես խնդրեցի ինձ վստահել և մայրիկը վստահեց ինձ: Սարգիսի հարմարեցումը տևեց մեկ ամսից ավելի: Ես չէի թողնում, որ նա հասցնի նեղվել մանկապարտեզում, մայրիկը գալիս էր իմ ասած ժամին: Հաջորդ օրը Սարգիսն ավելի ուրախ էր գալիս: Գալիս էր, սակայն չէր մոտենում ճաշի սեղանին: Չէր օգնում ոչ մի միջոց: Ես որոշեցի նրան Մանեի հետ նախասրահում նստեցնել սեղանի մոտ: Մանեի ձեռքը հաց տվեցի և խնդրեցի, որ այդ հացի կտորն ուտի Սարգիսի հետ մեզնից հեռու: Իհարկե ես աննկատ հետևում էի: Մանեն ինձ հասկացավ և մեզ մոտ ստացվեց: Հետո մայրիկը խոստովանեց, որ 2 անգամ մանկապարտեզ հաճախելու փորձ են արել, բայց չի ստացվել: Եվ այդ դեպքից հետո, Սարգիսի հետ կապված ցանկացած հարցի դեպքում նրա մայրն ընդհատում էր խոսքս.<<ինչպես ասեք, ընկեր Նարինե>>:
Այսօր Սարգիսը, ով ուներ հաղորդակցման խնդիր, մեծ բեմեր է նվաճում իր դհոլ նվագելով: Բեմի վրա նրա ինքնավստահ կեցվածքով ես ուղղակի հիանում եմ:
Այսպիսով, ես ուղղակի չխանգարեցի Սարգիսին՝ հարմարվել նոր միջավայրին: Նաև այն, որ յուրաքանչյուր երեխա մի անհատականություն է և նրան պետք է մոտենալ անհատական և նուրբ մոտեցմամբ:

Հասակակիցների հետ շփումը հատուկ իմաստ է ստանում միջին նախադպրոցական տարիքում, երբ երեխան իրեն համեմատելով հասակակցի հետ նրա մոտ ձևավորվում է իր մասին իրական պատկերացում:

Հաղորդակցությունը որպես վերլուծական մտածողության շարժիչ գործոն

1 . Հաղորդակցություն ասելով ես հասկանում եմ

Ա) զրույց երեխայի հետ

Բ) երկխոսություն երեխայի հետ

Գ) խմբային զրույց երեխայի հետ

Դ) այլ կարծիք

1_ին տարբերակ 2_րդ տարբերակ

2. Երեխա-ծնող-մանկավարժ անհավասարաչափ անկյուններով եռանկյան մեջ ում որ անկյան տակ կնշեք:

2_ին տարբերակ 2_րդ տարբերակ

3. Տեղեկատվության ստացման փուլում ի՞նչ ազդակներ կարող են ազդել երեխալի ընկալման վրա

Ա) տեղեկացնողի տրամադրվածությունը

Բ) երեխային նախապատրաստելու աստիճանը

Գ) այլ պատճառ

1_ին տարբերակ 2_րդ տարբերակ

4. Տեղեկատվության ընկալում-մշակում-փոխանցում շղթայում կարո՞ղ ենք ևս 1 օղակ ավելացնել:

1_ին տարբերակ 2_րդ տարբերակ

5. Տեղեկատվության փոխացման փուլում ինչպիսի՞ն պետք է լի ի մեծահասակի դիրքորոշումը

Ա) թողնել երեխան ազատ փոխանցի

Բ) փոխանցման ժամանակ աննկատ միջամտել

Գ) հսկել փոխանցման ընթացքը

Դ) այլ պատասխան

1_ին տարբերակ 2_րդ տարբերակ

6. Որևէ տեղեկատվություն փոխանցելիս ինչպե՞ս կարելի է ստուգել արդյունքը

Ա) երեխայից պահանջել կրկնել

Բ) անկաշկանդ զրույց վարել նրա հետ

Գ) հարցերի միջոցով ստուգել ընկալումը

Դ) այլ կարծիք

1_ին տարբերակ 2_րդ տարբերակ

7. Ոչ վերբալ հաղորդակցման ժամանակ ի՞նչը պետք է լինի մանկավարժի գնահատման հիմքում

Ա) երեխայի անհատականությունը

Բ) միջավայրը

Գ) մեծահասակի ուղղորդումը

Դ) այլ կարծիք

1_ին տարբերակ 2_րդ տարբերակ

8. Հաղորդակցումն ի՞նչ դեր է կատարում երեխայի անհատականության ձևավորման գործում

Ա) հնարավորություն է տալիս երեխային մշակել և զարգացնել իր խոսքը

Բ) կարգավորել իր հարաբերություններն այլ երեխայի հետ

Գ) դառնալ տվյալ սոցիումի լիարժեք անդամ

Դ) այլ պատասխան

1_ին տարբերակ 2_րդ տարբերակ

Թեստի նպատակը ոչ թե թեստավորվողների գիտելիքների ստուգումն է, այլ նրանց վերբերմունքը քննվող հարցի վերաբերյալ:

Ինչպես հայտնի է, մանկավարժությունը հնագույն երևույթ է և սկիզբ է առնում այն պահից, երբ ի հայտ եկան երեխան և ծնողը:

Սակայն պակաս հայտնի չէ նաև այն տեսակետը, որ յուրաքանչյուր ոք իրեն համարում է տվյալ բնագավառի գիտակ: Բնավ չթերագնահատելով ոչ ոքի գիտելիքները, մենք փորձում ենք այսպես հանրությանը ներկայացնել մեր աշխատանքը:

Թեստի կառուցվածքն այնպիսին է, որ այն 1ին տարբերակում լիովին արտահայտում է մասնակցի կարծիքն ու տեսակետը, իսկ 2րդ մասում, նորից լրացնելով թեստը, թեստավորվողն ինքն իրեն ստուգում է՝ արդյո՞ք փոխեցին դրանք նյութի ծանոթանալուց հետո:

Այս ձևի առավելությունն այն է, որ այն հնարավորություն է տալիս երկուստեք ստուգել, քննարկել, վերլուծել յուրաքանչյուրի վերաբերմունքը, լրացնել և զարգացնել մեր գիտելիքները հանուն մանկավարժության զարգացման մասնավորապես և հանուն մարդկության բարօրության ընդհանրապես:

Ընդհանուր եզրակացություն

Այսպիսով՝ երեխայի հետ ճիշտ հաղորդակցումը մեծ դեր է խաղում նրա անհատականության ձևավորման գործում: Քանի որ երեխան աճում և զարգանում է հասարակության մեջ, հենց հաղորդակցման հնարքներն են նրան թույլ տալիս հարմարվել և լիարժեք ապրել հասարակության մեջ: Հասակակիցների հետ հաղորդակցման ընթացքում երեխան, համեմատելով իրեն հասակակցի հետ, ձգտում է ճանաչել և գնահատել սեփական ձեռքբերումներն ու անհաջողությունները: Հասակակցի հետ հաղորդակցվելու պահանջմունքն ուժգնանում է միջին եւ ավագ նախադպրոցական տարիքում. հասակակիցը դառնում է երեխայի նախընտրելի գործընկեր: Իսկ արդեն մանկապարտեզի ավագ խմբում ձևավորվում է երեխաների հաղորդակցման, միջանձնային հարաբերությունների համեմատաբար կայուն և տարբերակցված համակարգ: Եվ որ ամենակարևորն է երեխային ընդունել այնպիսին, ինչպիսին նա կա:

Գրականություն.
Дубина Л. “Развитие у детей коммуникативных способностей” Дошкольное воспитание 2005